

### ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի դոկտորանտ

## ՀԱՅԵԳՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ՈՐՊԵՍ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԱՆՈՐՈՇ ԵՎ ԱՆԿԱՅՈՒՆ ՉԱՓԱՆԻՇ

Սույն գիտական հոդվածում հեղինակը քննարկման առարկա է դարձնում «Հայեցողության ազատության սահմաններ» տեսության կիրառման առանձնահատկությունները, որոնք սահմանվել են Եվրոպական դատարանի կողմից: Մասնավորապես, համադրելով «Կոնվենցիան կենդանի օրգանիզմ է» Դատարանի կողմից սահմանված սկզբունքի հետ, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ տվյալ սկզբունքի կիրառումը պետությունների հայեցողության ազատությունը կամ դրանց սահմանները դարձնում է ոչ կանխատեսելի, հետևաբար՝ անորոշ: Այսինքն, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ հայեցողության ազատությունը թեև պետության լիազորությունների ամբողջություն է, սակայն դրա սահմանների որոշումը Դատարանի կողմից պետության հայեցողության ազատությունը դարձնում է հիմնականում ձևական բնույթի վերլուծության արդյունք: Այսպիսով, վերը անցկացված վերլուծությունը թույլ է տալիս հանգել նրան, որ հայեցողության ազատությունը ենթադրում է լիազորություններ, որոնցով օժտված են պետությունները միջազգային պայմանագրին համապատասխան ստանձնած՝ իրենց միջազգային իրավական պարտավորությունը կատարելիս, ընդ որում, հաշվի առնելով, որ Դատարանի սահմանած նախադեպերին համապատասխան Կոնվենցիան կենդանի օրգանիզմ է, հետևաբար, պետության հայեցողության սահմանները կախված են տվյալ ժամանակահատվածում առնվազն միջազգային հարաբերությունների զարգացմանը համընթաց մարդու իրավունքների շրջանակների ընդլայնման անհրաժեշտությունից:

*Հիմնարարը՝ պետության հայեցողության սահմաններ, պետության հայեցողության ազատության ծավալ, պաշտպանվող հասարակական շահ, ժողովրդավարական հասարակություն:*

Հայեցողության սահմանները Դոկտրինի, գործառնությանին տեսակետից, վերլուծության ժամանակ, կարևորագույն հարցը, այնուամենայնիվ, կայանում է պետության հայեցողության ազատության սահմանների վերաբերյալ հարցի պատասխանը: Իրոք, Դատարանի պրակտիկայում դատողություններն այն մասին, թե արդյոք խախտվել են պետության հայեցողության ազատության սահմանները, հաճախ դառնում են ժողովրդավարական հասարակությունում տվյալ միջոցների անհրաժեշտության մասին հարցի պատասխանը, ինչը և որոշում է գործի ելքը<sup>1</sup>:

Սակայն, պետք է նկատել, որ հայեցողության ազատության ընդհանուր, միասնական, հստակ սահմանված սահմաններ գոյություն չունեն: Հայեցողության սահմանները ստատիկ վիճակ չեն և աչքի չեն ընկնում կայունությամբ, ինչը մշտապես անորոշություն է առաջացնում ներպետական իրավակիրառ մարմինների մոտ:

Վերոհիշյալ մոտեցումը արտահայտել է նաև Ա.Ն.Ռուսովինը, ըստ որի. «...չի կարելի ձևակերպել պետության թույլատրելի վարքագծի շրջանակների սահմանման ընդհանուր, ունիվերսալ կանոնների հավաքածու և, հետևաբար, վստահորեն կանխատեսել, թե ինչպիսին դրանք կլինեն յուրաքանչյուր ընճվող գործում»<sup>2</sup>:

Տվյալ հարցի կապակցությամբ Ն.Ն.Լիպկինան իր աշխատության մեջ սահմանում է, որ. «...հայեցողության ազատության սահմանները սահմանելը հնարավոր է Կոնվենցիայում ամրագրված և Եվրոպական դատարանի կողմից ակտիվորեն կիրառվող չափանիշների օգնությամբ, նախ առաջինը՝ միջամտությունը պետք է նախատեսված լինի օրենքով և պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով, ինչպես պահանջում են Կոնվենցիայի դրույթները, երկրորդը՝ միջամտությունը պետք է «անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում», այսինքն լինի հիմնավորված և համաչափ այն նպատակին, որին այն հետապնդում է»:

Այսինքն, միայն այն դեպքում, երբ հաստատված կլինի, որ միջամտությունը տեղի է ունեցել, իսկ պետությունը ունեցել է հայեցողության ազատություն, Եվրոպական դատարանը բարձրացնում է այդպիսի ազատության սահմանների պահպանման հարցը, որոնք սահմանափակվում են կատարման անհրաժեշտությամբ՝ մի կողմից, իրավունքների և ազատությունների իրականացմանը միջամտության օրինականության պահանջի և ժողովրդավարական հասարակությունում դրա անհրաժեշտության պահանջի՝ մյուս կողմից»<sup>3</sup>:

Պետության կողմից որևէ հասարակական

www.journal.lawinstitute.am

սպառնալիքի կանխարգելման համար անհրաժեշտ որևէ միջոցի կիրառման իրավիճակում, սակայն, որի միջոցով միաժամանակ իրականացվում է միջամտություն Կոնվենցիայով պաշտպանվող իրավունքների մեջ, անհրաժեշտ է տարբերակել երկու կողմեր. պետության հայեցողության ազատությունը և պետության կողմից իր հնարավորությունների փաստացի իրացում, այսինքն՝ իր կողմից ձեռնարկված կոնկրետ միջոցները :

Ընդ որում, հայեցողության ազատությունը լինելով ոչ կայուն չափման միավոր<sup>6</sup>, հանդիսանում է յուրաքանչյուր կոնկրետ հանգամանքներում պետության պոտենցիալ հնարավոր գործողությունների սահմաններ, որի շրջանակներում գործելով՝ պետությունը չի խախտում Կոնվենցիան, անգամ եթե միջամտում է իր կողմից պաշտպանվող իրավունքների իրացման մեջ:

Սակայն, պետության հայեցողության ազատության ծավալի վրա առավելապես ազդում են գործի կոնկրետ հանգամանքներին վերաբերվող մի շարք գործոններ : Այսինքն, առավել կարևոր է այն հանգամանքը, թե ինչպես պետությունները պետք է կանխատեսեն իրենց հայեցողության սահմանները կոնկրետ հարցերի լուծման, կոնկրետ իրավունքների իրացման միջամտության դեպքերում:

Առաջնահերթ նշանակություն ունի պաշտպանվող հասարակական շահը: Բնականաբար, որքան կարևոր է տվյալ շահը և, համապատասխանաբար զգալի է այն հասարակական վտանգը, որը սպառնում է նրան, այնքան հայեցողության մեծ ազատության կտիրապետեն պետությունները նշված սպառնալիքը կանխարգելելիս:

Այսպես, օրինակ, Դատարանը խուսափում է «ժողովրդավարական հասարակությունում» սահմանափակող միջոցների, և, համապատասխանաբար, պետությունների հայեցողության ազատության մանրամասն վերլուծության «անհրաժեշտությունից» այն դեպքերում, որոնք վերաբերվում են գործերի հետևյալ կատեգորիաներին. թմրամիջոցների մասին<sup>9</sup>, կազմակերպված հանցավորության մասին<sup>10</sup> և ահաբեկչության մասին<sup>11</sup>: Տվյալ գործերով վճիռները տպավորություն են ստեղծում, որ պետությունները պարտավոր չեն հաշվետու լինել Դատարանի առջև այն միջոցների մասով, որոնք ձեռնարկվել են վերը թվարկված ոլորտներում: «Թվում է, թե վտանգը, որը ներկայացնում են հանցավոր գործունեության տվյալ տեսակները, ստեղծում է հիմքերի բավարար լինելու որոշակի անսխալական պրեզումպցիա»<sup>12</sup> Կոնվենցիայի պահանջներից շեղվելու համար: Դատարանը տվյալ հարցերի մասով որդեգրում է նեղ սուբյեկտիվ դիրքորոշում, ինչը նշված երեք ոլորտներում պետություններին վերապահում է հայեցողության լայն

ազատություն:

Ազգային անվտանգության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի նպատակը, անկասկած հանդիսանում են պետությունների հայեցողության ազատության ընդլայնումն արդարացնող կարևոր հրապարակային շահերը: Ներպետական իշխանությունների գործողությունների բարեխղճությունը կարող է բավարար փաստարկ հանդիսանալ, որպեսզի դրանք ճանաչվեն որպես Կոնվենցիային համապատասխանող: Ավելին, Դատարանը կարող է որոշել, որ ցանկացած կասկած մեկնաբանվում է պատասխանող պետության օգտին: Տվյալ հրապարակային շահերը մեկ անգամ չէ, որ դարձել են արտաքսման ենթակա անձանց անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի սահմանափակումների պատճառ<sup>13</sup>:

Սակայն, տվյալ մոտեցումը չի նշանակում ազգային իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցների անվերապահ արդարացում: Պետությունները պետք է ապացուցեն, որ քաղաքացիներին տրամադրվել են չարաշահումների դեմ դատավարական երաշխիքներ: «Չարաշահումների դեմ համարժեք և արդյունավետ երաշխիքների» գոյության ստուգումը հանդիսանում է պետությունների հայեցողության ազատության հարցը քննարկելու կարևոր չափանիշ<sup>14</sup>: Դատարանը մանրամասնորեն վերլուծում է ազգային օրենսդրությունը և պրակտիկան, ստուգելով, թե արդյո՞ք ներպետական իշխանությունների կողմից իրենց լիազորությունների կատարման նկատմամբ հսկողությունը իրականանալի է և պատշաճ<sup>15</sup>:

Միգրացիոն վերահսկողության ոլորտում Դոկտրինը ծառայում է յուրաքանչյուր պետության՝ իր տարածքում հսկողություն իրականացնելու սուվերեն իրավունքի ապահովմանը: Միջազգային իրավունքին համապատասխան, յուրաքանչյուր պետություն օժտված է իր տարածքում բացառիկ իրավագործությամբ: Տվյալ սկզբունքն իր արտացոլումն է գտել «Միտոևան և ուրիշները Լատվիայի դեմ»<sup>16</sup> գործում: Պետությանը, համաձայն տվյալ գործի նյութերի, ազատություն է տրամադրվել քաղաքացիության և իմիգրացիայի ոլորտում քաղաքականության բնագավառում:

Դատարանը պետություններին տրամադրել է լուծել իմիգրացիոն քաղաքականության հարցեր, այդ թվում՝ երբ իրականացումը խանգարում է երկու մարդկանց տվյալ պետությունում ոչ պաշտոնական կարգավիճակով ընտանեկան կյանքի իրավունքի իրականացմանը<sup>17</sup>:

Պետությունների հայեցողության ազատության ծավալը որոշող, սակայն գործի կոնկրետ հանգամանքներին չվերաբերվող այլ գործոնների թվին դասվում է Եվրոպական Խորհրդի անդամ պե-

տուրյունների միջև ներպետական գործերին վերաբերվող որոշակի հարցով կոնսենսուսի առկայությունը կամ բացակայությունը. հայեցողության ազատությունը «կլինի նեղ այնտեղ, որտեղ անդամ պետությունների միջև կոնկրետ հարցով ձեռք է բերվել ամուր կոնսենսուս, լայն՝ այնտեղ, որտեղ այդպիսի կոնսենսուս չկա»<sup>18</sup>:

Դատարանը նշում է, որ. «...պետությունների հայեցողության ազատությունը նույնը չէ Կոնվենցիայում հիշատակված... տարբեր նպատակների նկատմամբ»<sup>19</sup>, օրինակ, այն կրում է առավել սահմանափակ բնույթ, երբ խոսքը գնում է դատական իշխանության պաշտպանության մասին, և ընդլայնվում է հասարակական բարոյականության և դավանանքի հարցերը շոշափելիս: Իրոք, եվրոպական տերությունները հաճախ ունեն դատական համակարգի կառուցման և գործելու համանման սկզբունքներ, մինչդեռ պետական իշխանության վերաբերմունքը կոնկրետ բարոյական ու դավանաբանական արժեքներին տարբերվում է:

Այնուամենայնիվ, Դատարանի պրակտիկան, որը վկայում է այս կամ այն հարցերով եվրոպական կոնսենսուսի բացակայության մասին, լայն է: Նախադեպային նշանակություն ունի «Իփքսոնը Մեծ Բրիտանիայի դեմ» գործի<sup>20</sup> օրինակը, որի նյութերի համաձայն, պետական մարմինները մերժել են կալանավորվածին և ազատության մեջ գտնվող նրա կնոջը արհեստական բեղմնավորման իրավունքի իրականացման մեջ: Վերլուծելով բանտարկության ընթացքում այցելությունների ռեժիմը անդամ պետությունների տարբեր իրավական համակարգերում՝ Դատարանը հանգում է տվյալ ոլորտում միասնական կարծիքի բացակայության վերաբերյալ եզրակացության և ճանաչում է Մեծ Բրիտանիայի՝ նշված իրավունքի սահմանափակման իրավունքը:

Կոնվենցիայի տեսակետից, տվյալ իրավիճակը ընկալվում է որպես անցումային փուլ դեպի մարդու իրավունքների պաշտպանության բարձր միասնական ստանդարտներ: Իրոք, հասարակական հարաբերությունների և գիտության զարգացումը չի դոփում տեղում, իսկ Կոնվենցիան տալիս է մարդու իրավունքների ստանդարտների զարգացման նոր ուղղվածություն՝ առավել ընդգրկուն ու ողջամիտ պաշտպանության տրամադրում: Այդպիսի զարգացման իրականացման համար Դատարանը կիրառում է համեմատական և էվոլյուտիվ մեկնաբանման մեթոդներ<sup>21</sup>, որոնք հաշվի են առնում ազգային օրենսդրության և անդամ պետությունների կամ այլ միջազգային դատական ատյանների զարգացումը: Իրոք, ըստ Լ.Մ.Էնտինի դիրքորոշման. «Դատարանը վերաբերվում է Կոնվենցիային ինչպես զարգացող կենդանի մեխանիզմի»<sup>22</sup>: Ըստ

մարդու իրավունքների պաշտպանության ավելի բարձր ստանդարտների հայտնաբերման և դրանք ավելի մեծ թվով պետությունների կողմից աստիճանաբար ճանաչմամբ, համեմատական և էվոլյուտիվ մեկնաբանման՝ տվյալ մեթոդների օգտագործումը կարող է հանգեցնել անդամ պետությունների մոտեցումների ճանաչմանը և պետությունների հայեցողության ազատության և նրանց «տարբերվելու իրավունքի» սահմանափակմանը, որոնք հայտնվել են փոքրամասնության թվում:

Դրա համար էլ Կոնվենցիայի վերջնական նպատակը հանդիսանում է եվրոպական կոնսենսուսի տեսակետից հարցերի դեռևս վիճարկելի իրավական կարգավորման ընդհանուր ստանդարտների կիրառումը: Ինչպես երևում է, Դատարանը, որպես Եվրոպայի Խորհրդի մարմին, կառուցում է իր քաղաքականությունը մարդու իրավունքների ոլորտում, ընդ որում օգտվելով իրավական մեթոդներից՝ այդպիսով լուծելով միջազգային իրավունքի և քաղաքականության փոխհարաբերությունների հարցը, որոնց սերտ կապերի մասին խոսել է մասնավորապես Դ.Բ.Լևինը<sup>23</sup>:

Դատարանի պրակտիկան նաև ցույց է տալիս, որ հայեցողության ազատության սահմանները որոշելիս, պետության միջամտության ոլորտը, այսինքն, Կոնվենցիայով պաշտպանվող իրավունքների, շահերի խումբը, հանդիսանում է այնպիսի հատկանիշի նկատմամբ առաջնահերթ չափանիշ, ինչպիսին է՝ անդամ պետությունների միջև կոնսենսուսի առկայությունը՝ տվյալ հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման առումով: Այսպես, «B. c. France» գործում<sup>24</sup>, Դատարանը վերլուծել է Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի օրենսդրությունը և հաստատել է պետության ներքին գործերին վերաբերվող սկզբունքորեն տարբեր մոտեցումների առկայությունը: Չնայած կոնսենսուսի բացակայությանը և, հետևաբար պետությունների հայեցողության լայն ազատությանը, Դատարանը ճանաչեց Ֆրանսիայի պարտությունը, քանի, որ գործը վերաբերվել է ոչ ավանդական սեռական կողմնորոշմամբ անհատի անձնական կյանքին միջամտելուն: Դատարանի կարծիքով ամենօրյա անհանգստությունները, որոնք պատճառվել են դիմումատուին, չեն կարող արդարացվել ամբողջ հասարակության շահերի պաշտպանության շարժառիթներով: Այսպիսով, Ֆրանսիայի Հանրապետությունը խախտել է հայեցողության ազատությունը, որով նա օժտված է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի լույսի ներքո:

Այսպիսով, վերը անցկացված վերլուծությունը թույլ է տալիս հանգել նրան, որ հայեցողության ազատությունը ենթադրում է լիազորություններ, որոնցով օժտված են պետությունները միջազգային

պայմանագրին համապատասխան ստանձնած իրենց միջազգային իրավական պարտավորությունը կատարելիս, ընդ որում, հաշվի առնելով, որ Դատարանի սահմանած նախադեպերին համապատասխան Կոնվենցիան կենդանի օրգանիզմ է, հետևաբար, պետության հայեցողության սահման-

ները կախված են տվյալ ժամանակահատվածում առնվազն միջազգային հարաբերությունների զարգացմանը համընթաց մարդու իրավունքների շրջանակների ընդլայնման անհրաժեշտությունից:

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ Դատարանի որոշումը Ireland v. The UK. – 1978. – 18 հունվար, § 214, 243. URL: [http://hudoc.echr.coe.int/eng#{"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{) (դիմում 28.11.2014թ.)

<sup>2</sup> Տե՛ս, Դատարանի որոշում Emonet and others v. Switzerland. 2007թ., 13 դեկտեմբեր, § 87, 88; Դատարանի որոշում Porubova v. Russia. 2009թ., 8 հոկտեմբեր, § 40, 50:

<sup>3</sup> Ռուսով Ա.Ն. ՄԻԵԴ կողմից գործերի լուծման մեթոդաբանական կողմերը՝ ատեն... իրավ.գիտ.թեկն. : 12.00.10 / Ռուսով Ալեքսեյ Նիկոլայի. Մոսկվա, 2006թ.:

<sup>4</sup> Տե՛ս, Նույն տեղը էջ. 115:

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ Դատարանի որոշումը Hirst v. The UK. 2005. 6 հոկտեմբեր, § 82: URL:[http://hudoc.echr.coe.int/eng#{"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{) (դիմում՝ 01.03.2011):

<sup>6</sup> Տե՛ս, սույն հետազոտության Գլուխ I §5 և գլուխ III:

<sup>7</sup> Տե՛ս, սույն հետազոտության Գլուխ I §5 և գլուխ III:

<sup>8</sup> Մեկնաբանություն Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի և դրա կիրառման պրակտիկայի մասին / Վ.Ա. Տումանովի իր.գ. դ., պրոֆ. և իր.գ.դոկտ., պրոֆեսոր Լ.Մ.Էնտինի ընդ. խմբ. տակ, ՆՈՐՄԱ Հրատարակչ., 2002թ., էջ.336:

<sup>9</sup> Դատարանի որոշում Ludi c. Suisse, Որոշումների ժողովածու 1992թ., 238 Cour Eur. D.H. (Ser. A), էջ. 1:

<sup>10</sup> Դատարանի որոշում Raimondo c. Italie, Որոշումների ժողովածու 1994թ., 281A Cour Eur. D.H. (Ser. A), էջ. 1:

<sup>11</sup> Դատարանի որոշում Branningan c. Royaume-Uni, Որոշումների ժողովածու 1993թ., 258B Cour Eur. D.H. (Ser. A), էջ. 29 ; Դատարանի որոշում Murray c. Royaume-Uni, Որոշումների ժողովածու 1994թ., 300A Cour Eur. D.H. (Ser. A), էջ. 1:

<sup>12</sup> Picheral C. et Olinga A.-D., «La theorie de la marge d’appréciation dans la jurisprudence recente de la Cour europeenne des droits de l’homme»// Журнал R.T.D.H. 1995թ. N 6, էջ. 567:

<sup>13</sup> Դատարանի որոշում Bouchelkia v. France. 1997թ., 29 հունվար ; Դատարանի որոշում Boujlifa v. France. 1997թ., 21 հոկտեմբեր. Նույն տեղը:

<sup>14</sup> Կլասս և ուրիշները Գերմանիայի դեմ գործում Դատարանը նշել է, որ . «...ինչ դիտարկման համակարգ էլ, որ ներմուծվի, կարևոր է ապահովել արդյունավետ և համարժեք երաշխիքներ չարաշահումների դեմ». Տե՛ս Դատարանի որոշում Klass and others v. Germany. 1978թ., 6 սեպտեմբերի // Որոշումների պաշտոնական ժողովածու. N A28, §50. Տե՛ս նաև Դատարանի որոշում Leander v. Sweden. 1987թ., 26 մարտ // Որոշումների պաշտոնական ժողովածու. - N A116, §60. Լեէնդեր գործում Հանձնաժողովն ընդգծել է բավարար և արդյունավետ երաշխիքների անհրաժեշտությունը. Տե՛ս Հանձնաժողովի որոշումը Leander v. Sweden. 1985թ., 17 մայիս // Որոշումների պաշտոնական ժողովածու. N A116, §80:

<sup>15</sup> Դատարանի որոշում Leander v. Sweden. –1987. 26 մարտի //Որոշումների պաշտոնական ժողովածու. N A 116, §65:

<sup>16</sup> Տե՛ս, Դատարանի որոշում Sisojeva and others v. Latvia. 2007. 15 հունվար. Տե՛ս նաև վերը նշված Դատարանի որոշումը Konstantinov v. Netherlands. 2007. 26 ապրիլ. Համեմ. Դատարանի որոշում Shevanova v. Latvia. 2006թ., 15 հունիս:

<sup>17</sup> Դատարանի որոշում Konstantinov v. Netherlands. 2007թ., 26 ապրիլ URL:[http://hudoc.echr.coe.int/eng#{"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{) (դիմում 06.02.2014)

<sup>18</sup> Տե՛ս, Michael R. Hutchinson, «The Margin of Appreciation Doctrine in the European Court of Human Rights»// «International and Comparative Law Quarterly», N 48, 1999թ., էջ.638, էջ.640:

<sup>19</sup> Դատարանի որոշում Sunday Times c. Royaume-Uni, Որոշումների ժողովածու 1979, N 30 Cour Eur. D.H. (Ser. A), էջ. 1 - 36:

<sup>20</sup> Դատարանի որոշում Dickson v. UK. 2007թ., 4 դեկտեմբերի §51, 63, 78-81. URL:[http://hudoc.echr.coe.int/eng#{"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{) (դիմում 06.02.2014թ.)

<sup>21</sup> Մեկնաբանություն Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի և դրա կիրառման պրակտիկայի մասին /Վ.Ա. Տումանովի իր.գ. դ., պրոֆ. և իր.գ.դոկտ., պրոֆեսոր Լ.Մ.Էնտինի ընդ. խմբ. տակ:

<sup>22</sup> Եվրոպական իրավունք. Գասագիրք ԲՈՒՀ-ի համար / Կարգալուվա Մ.Վ., Կոզլով Ե.Յու., Նակու Ա.Ա., Տոլստոյայատենկո Գ.Պ. և այլն, Լ.Մ. Էնտինի ընդ. խմբ. 2 հրատ.

<sup>23</sup> Լևին Գ.Բ. Մանանակակից միջազգային իրավունքի հիմնական խնդիրները Մ, 1974թ., «Միջազգային իրավունքը որպես արտաքին քաղաքականության գործիք»

<sup>24</sup> Դատարանի որոշում В. с. France, Сборник решений. 1992թ., N 232С, Cour Eur. D.H. (Ser. A), էջեր 28 - 53:

**Геворг Костянян**

Кандидат юридических наук, доцент.  
Докторант института философии, социологии и права  
Национальной Академии Наук Республики Армения

### РЕЗЮМЕ

#### *Пределы дискреционных полномочий, как неопределенный и непостоянный критерий функционирования внутригосударственных органов*

В данной научной статье автор исследует особенности применения теории “Пределы свободы дискреционных полномочий”, установленных Европейским судом. В частности, сопоставляя с установленным Судом принципом того, что “Конвенция является живым организмом”, автор приходит к выводу, что применение данного принципа делает свободу дискреционных полномочий государств или их пределы непредсказуемыми, а значит – неопределенными. То есть, автор приходит к тому заключению, что несмотря на то, что свобода дискреционных полномочий является совокупностью полномочий государства, тем не менее, определение его пределов со стороны Суда делает свободу дискреционных полномочий государства в основном формальной. Таким образом, вышеупомянутый анализ дает возможность сделать вывод, что свобода дискреционных полномочий предполагает полномочия, которыми обладают государства, выполняя свои международные правовые обязательства в соответствии с международными договорами. Также, принимая во внимание, что в соответствии с прецедентами определенными Судом, Конвенция является живым организмом, следовательно пределы дискреционных полномочий государства зависят как минимум от необходимости расширения рамок свобод человека в соответствии с развитием международных отношений в данный период времени.

**Ключевые слова** – *пределы дискреционных полномочий государства, объем свободы дискреционных полномочий государства, защищаемые общественные интересы, демократическое общество.*

**Gevorg Kostanyan**

PhD in Law, Associate professor.  
Doctoral at the Philosophy, Sociology and Law Institute  
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

### SUMMARY

#### *Limits of discretion as an indefinite and unstable criteria of direction of intragovernmental bodies' activity*

In this scientific article the author examines the application peculiarities of the theory of “Freedom Limits of Discretion” defined by the European Court. In particular, as opposed to the principle of “Convention being a living organism” defined by the Court, the author of the article concludes that the application of this principle makes the discretion of states or their freedom limits non-predictable and thus vague. In other words, the author comes to a conclusion that the freedom of discretion although being a unity of state’s authority, nevertheless, the definition of its limits by the Court makes the freedom of discretion mainly of formal character. The abovementioned analysis makes it possible to conclude that the freedom of discretion supposes authority, which due to the international agreement the states possess when fulfilling their legal responsibilities envisaged by the above-mentioned agreement. Thus, taking into account that due to the precedents outlined by the Court, the Convention is a living organism and so the limits of the state’s discretion depend upon the necessity of broadening the circle of human rights in line with the developments of international relations in the given period of time.

**Keywords** – *limits of state’s discretion, volume of state’s freedom of discretion, defending social interests, democratic society.*